

Э. Г. ТУМАНЯН, *Древнеармянский язык*, Москва, 1971, 448 стр.,
цена 1 р. 95 коп.

Հին հայերենին նվիրված այս նոր մենագրությունը նպատակ ունի ուսանողներից օգտվող ընթերցողներին ծանոթացնել զրաբարի առանձնահատկություններին՝ բոլոր մակարդակներում: Նման ձեռնարկի ստեղծումը ներկա մամանակում միանգամայն օրինալի է և անհրաժեշտ, մանավանդ որ այժմ զգալի չափով մեծացել է հնդեվրոպականների հետաքրքրությունը հին հայերենի նկատմամբ:

Փրախոսվող աշխատությունը, ինչպես նշում է ինքը հեղինակը, անցյալում և հատկապես վերջին տասնամյակներում Հայաստանում և նրա սահմաններից դուրս զրաբարի ուսումնասիրության ուղղությամբ ձեռք բերված տվյալների ընդհանրացման և դրանց հիման վրա լեզվի կառուցվածքի վերլուծման մի փորձ է: Օգտագործելով ու ի մի բերելով կատարված ուսումնասիրությունների արդյունքները՝ հեղինակը միաժամանակ ձգտում է նորովի մեկնաբանել մի շարք լեզվական իրողություններ՝ հենվելով նաև լեզվաբանական նոր ուղղությունների մեթոդների դրական կողմերի վրա:

Աշխատությունը կազմված է ներածությունից և հինգ մասերից, սրանք էլ՝ գլուխներից: Ներածության մեջ (էջ 3—21) է. Խումանյանը հակիրճ տեղեկություններ է հաղորդում հայ ժողովրդի ծագման ու կազմավորման, նրա լեզվի ձևավորման ու կրած ազդեցությունների մասին՝ տալով զրաբարի արևալային բնութագրեր: Հեղինակը համառոտակի անդրադառնում է զրաբարի ուսումնասիրության պատմությանը, առանձին ուսումնասիրությունների բնույթին ու հիմնական դրույթներին, հատկապես նոր հետազոտություններին, որոնցում հայերենին մեծ տեղ է հատկացվում հնդեվրոպական լեզվական իրողությունների հետագա զննահատման գործում: Թումանյանն ընդգծում է. Մակակի այն կարծիքը, որ հայերենը կենտրոնական դիրք է զբաղում հնդեվրոպական լեզուների շրջանում, որ այն «կամուրջ է դրոմ արիական լեզուներից դեպի բալթյան-սլավոնականները և հունարենից դեպի իտալական, կելտական ու գերմանական լեզուներ» (էջ 8): Այս բաժնում հեղինակն ընդհանուր դժերով ներկայացնում է հայերենի այբուրենի ստեղծման պատմությունը, ծանոթացնում տառերի, կետագրական նշանների և ընդհանրապես գրության հետ առնչվող որոշ հարցերի հետ:

Աշխատության առաջին մասը (էջ 22—96) նվիրված է զրաբարի հնչյունաբանությանը: Ե. Թումանյանն այստեղ քննում է զրաբարի բոլոր հնչյունները նախ՝ հնչյունախոսական, ապա՝

հնչույթաբանական հիմունքներով: Տարբեր հնչյունների այլևայլ հատկանիշների որոշման համար նա դիմում է լեզվական միավորների հակադրման և բաշխումային մեթոդներին և հանգում որոշակի եզրակացությունների: Հենվելով այդ ուղղությամբ Հայաստանում կատարված նորագույն ուսումնասիրությունների՝ վրա՝ հեղինակը նշում է, որ զրաբարում մեկ հնչույթի դիրքային տարբերակներ են Վ-ն, Վ-ն և Վ-ն, յ-ն և յ-ն, որ յ-ն և Վ-ն հանդես են գալիս եռակի արժեքով (ձայնավորի, բաղաձայնի և երկբարբառի ոչ վանկարար բաղադրիչի)՝ յուրաքանչյուր դեպքում ստանալով զրային տարբեր արտահայտություն:

Աշխատության երկրորդ մասում (էջ 97—170) հեղինակն անդրադառնում է զրաբարի բառակազմությանը: Այս մասը բաժանվում է երկու գլխի: Առաջինում քննվում է բառը իբրև կառուցվածքային միավոր, ձևույթների ամբողջություն, տրվում են բառի կառուցվածքը և զրաբարի բառերի համար բնորոշ կառուցվածքային կաղապարները: Երկրորդ գլխին ընդգրկում է հիշյալ կառուցվածքային միավորների կազմավորման այն հիմնական միջոցներն ու եղանակները, որոնց օգնությամբ ստեղծվում են նոր բառեր: Այս մասը (հատկապես առաջին ենթամասը) առավել կարևոր է, որովհետև այստեղ զրաբարի բառական նյութն առաջին անգամ վերլուծվում է լեզվաբանական նոր մեթոդների կիրառմամբ և նոր ձևով են լուծվում բառակազմության հետ առնչվող մի շարք հարցեր:

Ձևույթները բաժանելով իմաստակիր և կառուցվածքային խմբերի և նշելով դրանց մեջ մտնող տեսակներն ու ձևույթային միավորները՝ Թումանյանը քննում է բառի կառուցվածքը ոչ հարացուցային և հարացուցային շարքերով՝ ելնելով այն սկզբունքից, որ հարացուցային (թեք) ձևերում բառի կազմում ավելանում է ձևույթների թիվը՝ ի հաշիվ հիմքակազմիչ ձայնավորների (այսպես է գնահատում հոլովիչներն ու խոնարհիչները) և վերջավորությունների (հոլովակերտ և դիմային ցուցիչների): Այս եղանակով ոչ հարացուցային շարքում նա ներկայացնում է մեկից մինչև վեց ձևույթ ունեցող անունների և երեք-չորս ձևույթից կազմված բայերի կառուցվածքային կաղապարներ՝ համապատասխան օրինակներով: Ըստ որում հեղինակը նշում է, որ եթե անունների սկզբնաձևերում ոչ հարացուցային շարքերում, միաձևույթ կա-

1 Տե՛ս է. Աղայան, Գրաբարի բնականություն, հատ. Ա, Երևան, 1964:

ղապարը (արմատական բառ) տարածված է, ասպա րայական սկզբնաձևերում այն բացակայում է, երբեմն հանդիպում է հարացուցային շարքերում, որոնք կազմված են կատարյալի հիմքից, ինչպես՝ էջ, մուտ և այլն (էջ 102, 106)։ Հեղինակն առանձին-առանձին քննում է բոլոր կառուցվածքային կաղապարները՝ իրենց բաղադրան տարրերակներով (դրանց անդրադառնում է նաև առանձին խոսքի մասերի քննության ժամանակ), ցույց է տալիս դրանցից առավել բնորոշ ու տարածված տեսակները (էջ 102—106, 311—317 և այլն)։ Նա նշում է, որ անունների ոչ հարացուցային շարքի կաղապարները հարացուցային շարքում մեծանում են 1—2 ձևությամբ, ինչպես՝ սիրտ/սրտ-ի/սրտ-ի-ց, գետ-ակ/գետ-ակ-ս/գետ-ակ-ա-ց, այնինչ բայական հարացուցային շարքում ձևությունների բանակը սովորաբար չի ավելանում (դր-ե-լ/գր-ե-մ), իսկ —ան— ածանց ունեցող որոշ բայերի կատարյալի հիմքից կազմվող ձևերում նույնիսկ պակասում է (—ան— ածանցը դուրս է ընկնում)։

Անցնելով բառակազմության եղանակների քննությանը՝ Խումանյանը նշում է գրաբարի բառակազմական միջոցները, ընդգծում, որ դրանցից ամենատարածվածներն են բարդացումը և ածանցումը վերջածանցների միջոցով։

Հեղինակն այստեղ կարծիք է հայտնում, որ բառակազմական վերլուծությունը ցարդ հանգել է բառի բաղադրիչների՝ ձևությունների առանձնացման, վերջին հաշվով՝ ձևաբանական վերլուծության, մինչդեռ այն պետք է ցույց տա անմիջական բաղադրիչները և բառակազմության կանոնները։ Դրա համար հեղինակն առաջ է քաշում հիմքի հարցը, այն ներմուծում է բառակազմական մակարդակ՝ անվանելով ամանցվող հիմք (пронзводная основа — տառացի՝ ածանցող հիմք, տես էջ 111)։ Սա բառական, բառակազմական հիմք է, որի վրա ավելանում են ածանցներն ու ստեղծում նոր բառեր, և տարրեր է ձևաբանական կամ բերականական հիմքից։ «Ձևաբանական հիմքը... ընկած է անունների հարացուցային շարքի ձևավորման հիմքում,— գրում է հեղինակը,— ածանցվող հիմքը սկիզբ է դնում նոր բառերի» (էջ 111)։ Ըստ հեղինակի՝ արտահայտության դժուր ևս դրանք տարրերով են. բերականական հիմքը վերջանում է հոլովիչ ձայնավորով (սա մտքովում է հիմքի մեջ), իսկ ածանցվող հիմքը համընկնում է մեծ մասամբ ուղղականի ձևին՝ զրո վերջավորությամբ (էջ 111)։ Վերցնելով ասպատ, ասպատակ, ասպատակաւոր բառերը՝ հեղինակն ասում է, որ գրանցում բառակազմական (ածանցվող) հիմքեր են՝ ասպ, ասպատ, ասպատակ, իսկ բերականական հիմքերը կլի-

նեն՝ ասպատի, ասպատակի. ասպատակաւորի։ Հասկանալի է, որ ածանցվող հիմքն էլ կարող է լինել միաձևությամբ կամ պարզ, բաղաձևությամբ կամ բաղադրյալ (էջ 112—113)։ Պտղաբերորից օրինակում հիմքն է պտղաբեր—ը, որը կազմված է երկու արմատից և հոդակապից։

Է. Խումանյանն այնուհետև մեկ առ մեկ քննում է բառակազմական եղանակները, ածանցների տեսակները, ենթատեսակները, հասարակ դրանց ծագումը, բարդության տեսակները՝ տալով նաև կառուցվածքային կաղապարները (էջ 116—120)։

Անդրադառնալով նախդիրների ածանցային դերով գործածությանը՝ Խումանյանը գտնում է, որ տվյալ երևույթը ավարտված չէ, որովհետև դրանք չազդեցիկ են գործածվում նախածանցի դերով, ինչպես՝ ընդարձակ, ընկեր, ցայդ, առանցք, զգետնել, առեքել և այլն (էջ 128—129)։ Խոսելով օրէն. պես. բառ. կից ձևությունների բառային և ածանցական գործածության մասին՝ նա դրանք անվանում է կիսավերջածանցներ, դրանց մեջ նկատելով միջակա բնույթ. և միանգամայն տեղին նկատում, որ լիամասո բառերի վերջածանցի վերածման ճանապարհին իմաստային կենտրոնը, ծանրությունը տեղափոխվում է առաջին բաղադրիչի վրա (էջ 134)։

Աշխատության երրորդ մասում (էջ 121—307) քննության են ենթարկվում գոյականը, ածականը, թվականը և դերանունը։ Այստեղ հեղինակը, հետևելով պրոֆ. Գ. Ջահուկյանի մեթոդին², ընդունում է գրաբարի անունների հոլովման երեք տիպի հիմք և դրան համապատասխան՝ ինմատիկ, աթեմատիկ և տարահիմք հոլովումներ։ Վերջինիս տակ է գետեղում այն բառերը, որոնք դիտվում են իբրև անկանոն հոլովում ունեցողներ։ Բնութագրելով բերականական հիմքը՝ Խումանյանը հիմքի մեջ է մտցնում, հիմքի բաղադրիչ է դիտում հոլովիչ ձայնավորները, մի բան, որ համոզիչ չի թվում։ Նախ հիմքը, բաղադրիչ տարրով հանդերձ, պետք է առկա լինի բոլոր ձևերում, իսկ ուղղականում «հիմքի բաղադրիչը» բացակայում է (դա հեղինակն աշխատում է հիմնավորել նրանով, թե այն, իբր. թեք ձևերին է հատուկ և ոչ ուղիղ ձևին)։ Այնուհետև, եթե գրաբարի տարածամանակյա քննության դեպքում այդպիսի տեսակետը ինչ-որ չափով հիմնավորվում է, ապա համաժամանակյա քննության ընթացքում այն չի արգարացվում։ Ինչպես իրավամբ կարծում է պրոֆ. Ա. Ղարիբյանը, հնդեվ-

² Տե՛ս Գ. Ջահուկյան, Հին հայերենի հոլովման սխառմեր և նրա ծագումը, Երևան, 1959։

րոպական նախալիզմի հիմնական դիրքի վրա հասնելու համար հարկավոր է համարել, որ հիմնականում նույնությամբ չեն մնացել, դրանք վերափոխակերպվել են՝ վերածվելով հոլովման տեսակի ցույց տվող ցուցիչների, այսինքն՝ հոլովիչների³:

Է. Թումանյանը գրաբարի հոլովների համակարգում ընդունում է նաև ներգոյականի գոյությունը, թեև գրում է, որ այդ հարցը «գեղեցիկ կարելի վերջնականապես լուծված համարել» (էջ 195): Ըր տեսակետը նա ձգտում է հիմնավորել նրանով, որ բառական մի բանի խմբեր (նշվածների շարքում կարելի է ավելացնել նաև դասական թվականները, անվանական հոլովման ենթարկվող ստացական դերանունները և այլն) ներգոյականի իմաստն արտահայտելիս ստանում են -ույ, -չ մասնիկներ՝ ունենալով հատուկ ձևեր: Նախ նշենք, որ այս մասնիկները ներգոյականի մենաշնորհը չեն, հատուկ են նաև տրականին: Այնուհետև պետք է նկատի ունենալ, որ այդ բոլոր բառերը սահմանափակվում են միայն Ո և ՈՒ հոլովումներով, այն էլ զգանց ոչ լրիվ ընդգրկմամբ:

Հեղինակը ներկայացնում է հոլովների հիմնական իմաստային առումները, շարահյուսական դերը, կազմության առանձնահատկությունները, անդրադառնում է ծագումնաբանական հարցերին, նախալիզմի ու ցեղակից լեզուների հետ (սանսկրիտ, հունարեն, լատիներեն, սլավոն, և այլն) հայերենի ունեցած ընդհանրություններին, հնչյունափոխական երևույթներին և այլն:

Հանգամանալից ու գիտական բավարար մակարդակով է տարվում նաև դերանունների բնութագրումը: Հեղինակն այստեղ ընդգրկում է առանձնացնում է իբրև մի ուրույն տեսակ՝ անդրադարձ դերանուն: Ես բավական հիմնավոր է, որովհետև հիշյալ գերանվամբ նշվում է գործողը, պատկանելության, հանգման և այլ հարաբերությամբ, այսինքն՝ իս բառը գործածվում է գործողի անվան լինք ձևերի փոխարեն, թեև ստավելապես հանդես է գալիս ստացականություն իմաստով (փաստորեն առկա է անդրադարձության իմաստի համատեղում): Անդրադարձությանը հատուկ կիրառություն կարող է դրսևորել նաև ինքն անձնականը: Սակայն նկատվում է, որ դասական գրաբարում անդրադարձության իմաստն առտահայտելու համար իս, ինքն դերանունները փոխարինվում են երրորդ դեմքի անձնական դերանվան (նա) ձևերով:

Նշենք նաև, որ է. Թումանյանի տված բնու-

րոշումը անհաջող է: Նա գրում է. «Անդրադարձ դերանուններն արտահայտում են գործողություն, որն անցնում է գործող անձի վրա» (էջ 281): Իհարկե, գործողությունն էլ կարող է դիտվել առարկայական տեսքով, սակայն առաջին հերթին պետք է շեշտել այն, որ դերանունը ցույց է տալիս առարկա, անձ, և ընդունման օբյեկտը պետք է լինի այդ առարկան և ոչ թե գործողությունը:

Մենադրություն չորրորդ մասը (էջ 308—408) նվիրված է դրաբարի բայի, բայական բառույթի կառուցվածքի, կազմության առանձնահատկությունների, բայական դեմքի, թվի, ժամանակի, եղանակի, սեռի, անցողականության կարգերի և այլ հատկանիշների բնութագրումը: Հեղինակը ցույց է տալիս, որ գրաբարի բայը շունի հնդեվրոպական բայի արձատների տարահամեությունը (սուպլետիվիզմ) և վերջավորությունների բազմազանությունը: Հայերենն ընթացել է պարզեցման ուղիով՝ վերջավորությունների համեմատական աղքատությունը հատուցելով բայական երկու հիմքերով (խոնարհիչներով հանդերձ): Նա իրավացիորեն համաձայն է այն տեսակետին, որ բայական հիմքերը գրաբարում ուստնում են բառափոխական արժեք: Հանգամանալից բննելով անցողականության և սեռային (հատկապես ներդրական-կրավորական) հակադրությունները և դրանց ձևաբանական արտահայտությունները՝ է. Թումանյանը նշում է, որ կերպային հակադրության վրա հիմնված հնդեվրոպական ժամանակների համակարգի փոխարեն գրաբարը զարգացել է ժամանակային հակադրության մի համակարգ, որը բաշխվում է երկու՝ ներկայի ու կատարյալի հիմքերի վրա (էջ 331):

Օգտագործելով պրոֆ. Ա. Աբրահամյանի գրաբարի դասագրքի⁴ սկզբունքները՝ հեղինակը ներկայացնում է գրաբարի բայի խոնարհման համակարգը՝ ըստ չորս լծորդությունների, բնորոշ օրինակներով: Առանձին հարցերի բացատրության ընթացքում այստեղ և այլուր վկայակոչում է գոյություն ունեցող գիտական կարծիքները՝ հենվելով առավելապես ընդունելի տեսակետների վրա: Բայի համադրական (պարզ) ժամանակաձևերից հետո հեղինակը քննում է պատճառական, անկանոն խոնարհում ունեցող և պակասավոր բայերը՝ տալով դրանց խոնարհման հարացույցը, ծանոթացնում է միադիմի բայերի կառուցվածքային տեսականներին: Այս բաժինն սովորաբար է բայական վերլուծական (բաղադրյալ) ձևերի բնութագրումը՝ ամբողջ հարացույցի մեջ դրանց ուրույն

³ См. А. С. Гарнбьян, Система склонеия имен древнеармянского языка, «Вопросы языкознания», 1972, № 6, էջ 102, 104:

⁴ Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձևաբան, Երևան, 1952:

տեղի, իմաստային առանձնահատկությունների, առաջացման պատճառների և հետագա վարձացման հնարավորությունների նշումով հանդերձ:

Աշխատության հինգերորդ մասում (էջ 416—435) նախդիրների ու նախորդությունների, մակբայների, եղանակավորող բառերի, շաղկապների և ձայնարկությունների համառոտակի նկարագրությամբ հեղինակն ամբողջացնում է գրաբարի ձևաբանության քննությունը: Վերջում ղեկավարում է նաև բնագրային մի քանի հատվածներ՝ գրաբար և թարգմանաբար (ռուսերեն):

Ամբողջ ուսումնասիրության ընթացքում, նկատի ունենալով ոչ հայ ընթերցողի շահերը, հեղինակը գրաբարյան բոլոր բառ-օրինակների կողքին հետևողականորեն նշում է դրանց տառադարձված ձևը, ինչպես և նշանակությունը:

Ցանկալի է այս օգտակար աշխատությունը ղերծ տեսնել տեխնիկական թերություններից ու վրիպակներից, որոնք բավական շատ են (մի մասը դիտված է): Այսպես, հովուսուֆ ձևը տպագրվել է հովուսաֆ (էջ 33), аѣтмент-ը՝ аеумент (էջ 67), երեւիմ՝ երեւիմ, երեւոյք՝ երեւոյթ (էջ 147), ի յայտ գալ՝ ի հայտ գալ (էջ 167), Հոռվմ՝ Հոռվն (էջ 202), ծ տառի փոխարեն գրվել է ն՝ $t+s=\delta$ (էջ 58), բաղբոջ-ը տառադարձվել է coť-boj փոխ. boť-boj և այլն: Նկատվում են մեխանիկական թերություններ. գրաբարի և երկշրթնային հնչյունը անվան-

վել է շրթնատամնային (էջ 132), Դուրֆ ձևը թարգմանվել է дверн, դուրնֆ՝ vorota (էջ 187), մինչդեռ պետք էր նակառակն ասել, Հոգնակի սեռականի վերջավորությունը վերագրվել է եզակիին (էջ 137): 57-րդ էջում հնչյունական որոշ շարքերի բնութագրման ժամանակ յորիզոնական շարքը անվանվել է ուղղահայաց: Անհատոս մի քանի բառերի թարգմանությունը. հուր (կրակ) թարգմանված է пламя (էջ 27), իմ ымея (էջ 37), հանդեպ՝ удобный (էջ 93), տուաֆ՝ мы были отдалены (էջ 31), որն ունի նաև ներգործական նշանակություն, բազե, ястреб (էջ 93), коршун (էջ 188), թեև ընդունված է նրա ուսերեն նույնանիշը համարել соко́л բառը: Անդգույշ ձևակերպում են ստացել մի շարք մտքեր:

Նշված մասնակի թերությունները, սակայն, բոլորովին չեն նսեմացնում գրախոսվող աշխատանքի արժեքը: Է. Թումանյանի մենագրությունը գրված է գիտական պատշաճ մակարդակով և գրաբարի հնչյունաբանության, բառակազմության ու ձևաբանության համալոգմանի քննություն է՝ կատարված այդ ուղղությամբ անցյալի ու ժամանակակից լեզվաբանների ձեռք բերած նվաճումների հաշվառումով: Ուստի այն միանգամայն արժեքավոր է թե՛ իբրև գրաբարի գիտական ուսումնասիրություն, և թե՛ իբրև գրաբարի ուսուցման ձեռնարկ:

Վ. ԾԱՌՈՒԿՅԱՆ

L'Ambassade en Perse de Luis Pereira de Lacerda... 1604—1605, R. Gulbenkian, Lisbonne, 1972.

Լուիս Պերեյրա դե Լասերդայի դեսպանությունը Պարսկաստան... 1604—1605, Ռ. Կյուլպենկյան, Լիսաբոն, 1972:

Արևելագիտության և հայագիտության տեսանկյունից ուշագրավ սույն աշխատությունը լույս է տեսել Լիսաբոնում 1972 թ., Գալուստ Կյուլպենկյան հաստատության մականիշով: Ռեբերտ Կյուլպենկյանի աշխատասիրությամբ Այն բաղկացած է երկու հիմնական մասից. Ա. ուսումնասիրություն, Բ. բնագրեր: Ա մասն ունի 9 գլուխ, իսկ Բ մասը՝ 3 գլուխ: Աշխատությանը կցված են նաև առաջաբան, ներածություն, 4 հավելված (բնագրերի պորտուգալերեն օրինակները), բնագրերում արտացոլված ղեկերին առնչվող որմնանկարների լուսանկարներ, քարտեզներ և նյութերի ու նկարների ցանկեր:

Իրանական պետականության կազմավորման 2500-ամյակի առիթով Ռ. Կյուլպենկյանին հանձնարարվում է հրապարակել Լուիս Պերեյրա Դե Լասերդայի ուղեգրությունը 1604—1605 թթ. Իրան կատարած իր առաքելության վերաբեր-

յալ: Սույն ձեռնարկի նպատակն է եղել լուսաբանել իրանա-պորտուգալական հարաբերությունները (XVI դարի սկզբից մինչև XVII դարի վերջը) նոր հրատարակվող նյութերի հիման վրա:

Հնդարձակ ներածության մեջ հեղինակը նախապես հանդամանորեն խոսում է Իրան մեկնած պորտուգալական տարբեր պատգամավորությունների վերաբերյալ եղած հրատարակությունների մասին և միաժամանակ հաստատում, որ խնդրո առարկա ուղեգրության հեղինակն է Բելիսիոր Դոս Անշուր, որը Լուիս Պերեյրայի գլխավորած պատգամավորության անդամներից մեկն էր: Նա համառոտ, բայց շատ օգտակար խոսք է ասում հիշյալ պատգամավորությունների պատմության, նպատակի և իրադրությունների մասին: 1510 թ., ի պատասխան Իրանի Սեֆյան հարստության հիմնադիր Շահ Իսմայիլի Դոս